# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Իններորդ Տարի



ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1874

digitised by A.R.A.R.@




# ՍԻՈՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 11.

ԱՄՍԱԳԻՐ

ՆՈՅԵՄԲԵՐ 30
1874.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ


## ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ ՀԻ՛Ն ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ (*)

Նախ՝ ձայնէ նա, թէ եկն նա յաշխարհ քարոզել զճշմարտութիւն Աստուծոյ, աւետարանել զարդարութիւն վասն փրկութեան մարդկան, զանկատարութիւն և զանքաւականութիւն զոհից և պատարագաց Հրէից, ըստ այնմ թէ. «Յոլով արարեր դու տէր Աստուած իմ զսքանչելիս քո, և խորհրդոց քոց ոչ ոք է, որ նմանիցի քեզ: Պատմեցի և խօսեցայ, և բազումք եղեն քան զթիւս. ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար. լսելիս հաստատեցեր ինձ, ողջակէզս և ընդ վասն մեղաց ոչ խնդրեցեր: Յայնժամ ասացի թէ, ահաւասիկ գամ ես, 'ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ: Առնել զկամս քո Աստուած իմ կամեցայ, և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ: Աւետարանեցի զարդարութիւն քո յեկեղեցւոջ մեծի, ահա զշրթունս իմ ոչ արգելից 'ի քէն: Տէր դու գիտացեր, զի զարդարութիւն քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում, զճշմարտութիւն քո և զփրկութիւն քո: Ասացի և ոչ թաքուցի զողորմութիւն քո և զճշմարտութիւն քո 'ի ժողովրդենէ մեծ է»: Սաղ. Լ,Ի. 7–13:

Եթէ այս մարգարէութիւն էր վա-

(*) Շարունակութիւն. տես թիւ 10:




digitised by A.R.A.R.@

ոյն Քրիստոսի՝ հաւատոյ բանիւ սր-բոյն Առաքելոյն Պօղոսի յասելն նո-րա. «Քանզի ոչ կարէր արիւն նոխա-զաց և ցլուց բառնալ զմեղս. վասն որոյ ՚ի մտանել իւրում յաշխարհ ա-սէ. Զոհս և զպատարագս ոչ կամե-ցար, բայց զմարմին հաստատեցեր ինձ. ընդ ողջակէզս և ընդ վասն մեղաց ոչ հաճեցար: Յայնժամ ասացի թէ. ահաւասիկ եկի, ՚ի գլուխ գրոց գը-րեալ է վասն իմ առնել զկամս քո Աս-տուած: Վերագոյն ասէ, թէ ընդ զոհս, ընդ պատարագս և ընդ ողջակէզս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, և ոչ կամեցար, որ ըստ օրինացն մատչէին: Ապա ասէ, ահաւասիկ գամ առնել զկամս քո Աստուած, մերժէ զառաջի-նսն, զի զերկրորդն հաստատեսցէ: Ո-րով կամօք և մեք սրբեցաք ՚ի ձեռն պատարագի մարմնոյ Յիսուսի Քրիս-տոսի միանգամ: Եւ ամենայն քահա-նայապետ կայ հանապազորդ ՚ի պաշ-տաման, և զնոյն պատարագս մատու-ցանէ բազում անգամ, որք ոչ երբէք կարողք են բառնալ զմեղս: Իսկ սա զմի վասն մեղաց մատոյց պատարագ, և մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աս-տուծոյ»: Եբր. Ժ. 4–12:

Երկրորդ՝ ընտրութիւն Տեառն մե-րոյ ՚ի մէջ ազգայն Հրէից առ ՚ի լի-նել փրկիչ և Թագաւոր Իսրայէլի. Կանխաւ գուշակեալ է ՚ի Դաւթայ խորհրդաւոր նշանօք առ դէմս իւր, ըստ այնմ թէ. «Ի Տեառնէ է օգնու-թիւն որդոյն Իսրայէլի Թագաւորին մերոյ: Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, և ասացեր. Եդից զօգ-նութիւն իմ ՚ի վերայ հզօրին, և բարձր արարից զընտրեալն ՚ի ժողովրդենէ իմ-մէ: Գտի զԴաւիթ ծառայ իմ և իւ-ղով սրբով իմով օծի զնա: Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացու-ցէ զնա: Մի մի փոյթ է նմա թշնամին, և որդի անօրէնութեան մի չարչարես-ցէ զնա: Հարից առ աջի նորա զթշնա-միս նորա. և զատեալս նորա ՚ի պար-տութիւն մատնեցից: Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նո-րա: Եդից ՚ի ծովս զձեռն նորա, և ՚ի վերայ գետոց զաջ նորա: Նա կար-դասցէ առ իս՝ հայր իմ ես դու, Աս-տուած ընդունող փրկութեան իմոյ: Ես անդրանիկ արարից զնա և բարձր քան՝ զամենայն Թագաւորս երկրի: Յաւիտեան պահեցից նմա զողորմու-թիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա: Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զզաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից»: Սաղ. ՁԸ. 19–30:

Քրիստոս կոչի անդրանիկ ամե-նայն արարածոց եւ Թագաւոր Թա-գաւորաց, ըստ այնմ թէ. «Որ է պատկեր աներեւութին Աստուծոյ. եւ անդրանիկ ամենայն արարածոց: Զի նովաւ հաստատեցաւ ամենայն ինչ, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկ-րի, որք երեւելին, և որք ոչ երեւելին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, ե-թէ պետութիւնք, եթէ իշխանու-թիւնք, ամենայն ինչ նովաւ և ՚ի նոյն հաստատեցաւ»: Կող. Ա. 15–16:

Եւ ՚ի Յայտնութեան Յովհաննու-սի. «Ունէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ և ՚ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ. Թագաւոր Թագաւորաց եւ Տէր տերանց»: ԺԹ. 16:

Ըստ այսմ է տեսանել եւ ՚ի բան Սրբազան Պօսուէի հօրն, յասելն նո-րա թէ. «Աստուածային ընտրու-թիւն յայլ ինչ գերագոյն քան զոր թը-ւին ՚ի վերին երեսս հայեցուցանէ ըզ-միտս: Յանձինս խառնակեալն անդ ու-րեմն Մեսիային իբրեւ որդի Աբրահա-մու, հանդերձեալ էր լինել և որդի

digitised by A.R.A.R.@

Դաւթի եւ Թագաւորական Ցեղոյ։ Խոստումն Աստուծոյ առ Դաւիթ՝ եթէ աթոռ նորա կացցէ յաւիտեան, 'ի Մեսիայն ունէր զկատարումն եւ յանվախճան թագաւորութիւն նորա։ Սողոմոն՝ որ ընտրեցաւ պայազատել զնա՝ օրինակէ զՄեսիայն. վասն որոյ և ասաց Աստուած զնմանէ. «Ես եղէց նմա Հայր, և նա եղիցի ինձ յորդի»։ Եւ յայտ է՝ զի ոչ ուրեք խօսեցաւ Աստուած այսպէս զումեքէ 'ի թագաւորաց կամ 'ի մարգարէից։

Այսպէս 'ի վեր քան զամենայն ժամանակս առ Դաւթիւ եւ որդւովք նորա յայտնի լինէր խորհուրդ գալստեան Մեսիային հրաշալի մարգարէութեամբք, որքան զարեգական պայծառ և լուսաւոր էին»։ Վէպք ազգաց Ա. հատոր, երես 316։

Երրորդ՝ երգեալ մանկանց 'ի տաճարին՝ յորժամ Քրիստոս, թագաւորն փառաց, մտանէր յԵրուսաղէմ, նախաձայնէ Դաւիթ 'ի Սաղմոսի իւրում, ըստ այսմ թէ. «Այսօր է զոր արար Տէր. Եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք 'ի սմա։ Ո՛ Տէր փրկեա՛, ո՛ Տէր առաջնորդեա՛. օրհնեալ՝ որ գալոց ես յանուն Տեառն, և օրհնեցաք զձեզ 'ի տանէ Տեառն։ Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ու բազմութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ»։ Սաղ. ճժէ. 24—27։

Դարձեալ՝ «Համբարձաւ մեծվայելչութիւն քո 'ի վերոյ քան զերկինս։ Ի բերանոյ մանկանց տղայոց և ստնդեաց հաստատեցեր զօրհնութիւն»։ Սաղ. Ը. 2։

Ըստ այսմ է տեսանել և 'ի Մատ. 'ի գլ. ԻԱ. համ. 9. ուր ասի. «Եւ ժողովուրդքն որք առաջի և զհետ երթային, աղաղակէին և ասէին՝ Օրհնութիւն որդւոյ Դաւթի. Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն 'ի բարձունս»։

Դարձեալ. «Իբրեւ տեսին Քահանայապետքն և Դպիրքն զսքանչելիսն՝ զոր արար, և զմանկունսն՝ որք աղաղակէին 'ի տաճարին եւ ասէին, Ովսաննայ. օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան»։ ԻԱ. 15։

Եւ 'ի նոյն գլուխ ճժէ. համ. 22. Դաւիթ կոչէ զՔրիստոս «Վէմն, զոր անարգեցին շինողքն, նա՝ ասէ, եղեւ գլուխ անկեան»։ Քանզի մարգարէք և առաջնորդք Հրէից, որք պարտ էին լինել շինողք եկեղեցւոյն, որոյ վէմն էր Քրիստոս, անարգեցին։ Սմին աղագաւ նա ինքն Քրիստոս տէրն մեր զայս բան 'ի դէմս ածէ նոցա ասելով. «Չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր 'ի գիրս. Վէմն՝ զոր անարգեցին շինողքն նա եղեւ գլուխ անկեան. 'ի Տեառնէ եղեւ այս, և է սքանչելի յաչս մեր»։ Մատթ. ԻԱ. 42։

Ըստ այսմ է եւ յԵփեսացին 'ի գլ. Բ. համ. 20—22, ուր ասի. «Շինեալք 'ի վերայ հիման Առաքելոց և Մարգարէից։ Որոյ է գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս։ Յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար սուրբ տէրունի։ Յորում և դուք ընդ նմին շինիք 'ի բնակութիւն Աստուծոյ հոգւով»։

Եւ 'ի յԱռաջին Կաթուղիկեայց ասէ. «Քանզի կայ իսկ 'ի գիրս. Թէ ահաւասիկ դնեմ 'ի Սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ 'ի նա հաւատասցէ, մի ամաչեսցէ։ Ձեզ այսուհետեւ հաւատացելոց վէմ պատուական. իսկ անհաւատից, վէմ՝ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան։ Եւ վէմ գայթման և վէմ գայթակղութեան նոցա, որք գայթակղին ապստամբեալքն 'ի Բանէն՝ յոր և եդանն»։ Բ. 6—8։

Չորրորդ՝ նախաձայնէ Դաւիթ նա

digitised by A.R.A.R.@

և վասն չարչարանաց Տեառն 'ի ձեռն իշխանաց և ժողովրդեան Հրէից, ըստ այնմ թէ. «Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս։ Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա»։ Սաղ. Բ. 1–2։

Ըստ այսմ է և 'ի Գործս առաքելոց 'ի գլ. Դ. համ. 26–27. ուր ասի. «Որ 'ի բերանոյ Հօր մերոյ Դաւթի ծառայի քո 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ասացեր. Զմէ՞ խորհեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս։ Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա»։ Ժողովեցան արդարև 'ի քաղաքիս յայսմիկ 'ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի, զոր օծերն Հերովդէս և Պոնտոս Պիղատոս ազգօք և ժողովրդովք Իսրայէլի»։

Հինգերորդ՝ գուշակէ Դաւիթ անգութ թշնամանս, անասանելի չարչարանս և մահ, զոր կրեաց Յիսուս 'ի Հրէից, ըստ այնմ թէ. «Շուրջ եղեն զինև շունք բազումք, և ժողովք չարաց պաշարեցին զիս։ Ծակեցին զձեռս և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. նոքա հայեցան և տեսին զիս։ Բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւրեանց, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»։ Սաղ. ԻԱ. 16–18։

Դարձեալ, «Ետուն 'ի կերակուր ինձ լեղի, և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ»։ Սաղ. ԿԸ. 23։ Եւ ևս, «Աստուած իմ, Աստուած իմ, նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս»։ ԻԱ. 1։

Այս ամենայն կատարեցան 'ի Քրիստոս 'ի ժամ Զարչարանաց եւ 'ի Խաչելութեան իւրում, զորոց 'ի յԱւետարանչացն կարդացեալ է ամենայն. ամեն 'ի Մատթ. ԻԷ. 1–46։ Ի Մարկոս ԺԵ. 1–35։ Ի Ղուկ. ԻԳ. 1–46. և 'ի Յովհ. ԺԹ. 1–30։

Վեցերորդ՝ գուշակէ Դաւիթ նաև զյարութիւնն Տեառն, ըստ այնմ թէ. «Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։ Յուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քոյ մինչ իսպառ»։ Սաղ. ԺԵ. 10–11։ Եւ այս իսկապէս կատարեցաւ 'ի Քրիստոս. զի որպէս յայտ է, զկնի երից աւուրց յարեաւ նա 'ի մեռելոց, և մարմին նորա ոչ ետես ապականութիւն, ըստ այնմ թէ. «Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեան Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես ապականութիւն։ Գործ. Բ. 31։

Դարձեալ 'ի նոյն ասի, «Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա յարուցեալ զՅիսուս. որպէս և 'ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում. «Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ»։ Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց, և ոչ ևս դառնալոց է յապականութիւն։ Այսպէս ասէ. «Եթէ տաց ձեզ զսրբութիւնն Դաւթի զհաւատարիմ». քանզի և 'ի միւսումն ասէ, «Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։ Այլ Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց, և 'ի կամս Աստուծոյ ննջեաց, և յաւելաւ առ հարս իւր. եւ ետես զապականութիւն։ «Բայց զոր Աստուածն յարոյց ոչ ետես ապականութիւն»։ ԺԳ. 33–37։ Եւ 'ի Կորնթացւոցն ասէ, «Զի ես ձեզ զնոյն նախ աւանդեցի. զոր և ես ընկալայ. թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց։ Եւ զի թաղեցաւ, և թէ յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց. ԺԵ. 3–4։

digitised by A.R.A.R.@

Եօթնեւրորդ՝ նաեւ գուշակէ Դաւիթ զհամբարձումն Քրիստոսի յերկինս. զնստիլն ընդ աջմէ Հօր, զերկնային թագաւորութիւն նորա, և լինելն քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի. ըստ այնմ՝ թէ. «Լեառն ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել 'ի նմա. քանզի և Տէր իսկ բնակեսցի 'ի նմա իսպառ: Կառք Աստուծոյ բիւրապատիկք՝ հազարք ուղղիչք, եւ Տէր 'ի նոսա 'ի Սինէ սրբութեան իւրոյ: Ել 'ի բարձունս և գերեաց զգերութիւն. Էառ աւար, բաշխեաց պարգեւս, և ետ որդւոց մարդկան. քանզի թերահաւատից եւս բնակեալ եղիցին 'ի նմա»: Սաղմոս ԿԷ. 16–18.

Ահա այս է յայտնի նկարագիր Քրիստոսի Փրկչին մերոյ, և 'ի համբառնալն յերկինս գերեաց զիշխանութիւն սատանայի, և ետ պարգեւս որդւոց մարդկան զշնորհս Հոգւոյն Սրբոյ, ըստ այնմ՝ թէ. «Այլ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ է շնորհս ըստ չափու պարգեւացն Քրիստոսի. վասն որոյ ասէ, «Ել 'ի բարձունս գերեաց զգերութիւն, եւ ետ պարգեւս որդւոց մարդկան»: Եփես. Դ. 7–8.

Եւ 'ի Կողոսացիսն ասէ. «Մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւրում 'ի յաղթութեան իւրում»: Եփես. Բ. 15.

Դարձեալ 'ի հարիւր հինգերորդում Սաղմոսի ասի. «Ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ մինչեւ եդից ըզթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր 'ի Սիոնէ. և տիրեսցես դու 'ի մէջ թշնամեաց քոց: Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան 'ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ: Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ»:

Այս մարգարէութիւն ամենայն իսկ հաւաստի թէ վասն Քրիստոսի ասէ Դաւիթ. «Ասաց Տէր ցՏէր իմ», և այլն. ըստ այնմ՝ թէ, «Եւ 'ի ժողովիլ փարիսեցւոցն եհարց զնոսա Յիսուս և ասէ. Զինչ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞յր որդի է. ասեն ցնա՝ Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս, Իսկ զիա՞րդ Դաւիթ հոգւովն կոչէ Տէր և ասէ. «Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»: Մտթ. ԻԲ. 41–44: Ըստ այսմ՝ է և 'ի Գործս առաքելոց, ուր ասէ, «Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն՝ Ասաց Տէր ցՏէր իմ», և այլն որ զկնի: Բ. 34–35.

Եւ յԵփրայեցիսն ասի. «Նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին իւր շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւ առ նա թէ՝ Որդի իմ ես դու. ես այսօր ծնայ զքեզ»: Որպէս և 'ի միւսումն ասէ, «Դու ես քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի»: Ե. 5-6. Դարձեալ 'ի նոյնում ասէ, «Եւ եւս առաւել յայտ է, թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յառնիցէ այլ քահանայ: Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից: Քանզի վկայեցաւ թէ. «Դու ես քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի»: Է. 15, 16, 17.

Եւ եւս. «Իսկ ցՈրդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո. սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն: Վասն այնորիկ էօծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո»:

digitised by A.R.A.R.@

'ի Նոյն, Ա. 8, 9։

Եւ 'ի Գործս առաքելոց 'ի գլ. Ժ. համ. 38 ասէ, «ԶՅիսուս՝ որ 'ի Նազարեթէ, զոր էօծ Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ։

Եւ 'ի Յովհաննու ասէ. «Զի զոր Աստուած առաքեաց, զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին՝ Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա»։ Գ. 34, 45։

Յայտ ամենայնի յայտնապէս նըկարագրի Թագաւորութիւն եւ քահանայութիւն Քրիստոսի յաւիտեան։ Ըստ այսմ է եւ բան սրբազան հօրն Պօսուէի յասելն իւրում. «Յառաջագոյն եւս զնա Դաւիթ՝ եւ երգեաց զնա գեղապանծ և անհամեմատ օրինակաւ։ Բազում անգամ մեծ եղեալ զփառս որդւոյ իւրոյ Սողոմոնի հռչակել. ահա անդէն նորա Հայր հոգւոյն, և 'ի հիացման եղեալ՝ տեսանէր զնա գերագոյն փառօք և իմաստութեամբ քան զՍողոմոն։ Տեսանէր զՄեսիայն բազմեալ յաթոռ հաստատութեան առաւել քան զարեւ և զլուսին։ Տեսանէր խոնարհեալ առ ոտիւք նորա զամենայն ազգս, եւ զամենեսին օրհնեալ ըստ խոստմանն եղելոյ առ Աբրահամ։ Եւ 'ի վեր եւս կորովութեամբ կշռեալ զմիտս՝ տեսանէր զնա 'ի վայելչութիւն սրբոց յառաջ քան զարուսեակ ծնանելով յաւիտենից 'ի ծոցոյ հօր իւրոյ. քահանայապետ մշտնջենաւոր. որում ոչ այլ ոք յաջորդէ. և ոչ ինքն ումեք յաջորդեալ. անցեալ նախ քահանայապետ ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ կարգին Մելքիսեդեկի. կարգ նորահրաշ անծանօթ օրինաց անտի։ Տեսանէր զնա նստեալ ընդ աջմէ Աստուծոյ, հայելով 'ի բարձանց երկնից, արկեալ առ պատուանդանաւ ոտիցն զթշնամիս իւր։ Հիացեալ Դաւիթ ընդ չքնաղ տեսարանն, այլ յայլմէ լինի 'ի փառաց որդւոյն. և Տէր իւր կոչէ զնա»։ Ա. Հատոր, երես. 317։

Ութերորդ՝ են և այլ և այլ նկարագրութիւնք երեւելի հանգամանաց անձին Քրիստոսի, զորս Դաւիթ ցնծալով երգէ յեօթանասուն և միերրորդ սաղմոսարանի իւրում թէ. «Աստուած զիրաւունս քո արքայի տուր, և զարդարութիւն քո որդւոյ թագաւորի»։ և այլն որ զկնի, համար 1—20։

Արդ՝ զնկարագրական մարգարէութիւն Դաւթի ոչ կարէաք իմանալ. եթէ էին այնք խօսեցեալ վասն Քրիստոսի Փրկչին մերոյ. քանզի 'ի բազում յայնցանէ երեւի զի Դաւիթ նկարագրեալ է 'ի դէմս իւր կամ որդւոյ իւրոյ Սողոմոնի, եւ թէ Քրիստոս ինքն, առաքեալք նորա և վարդապետք եկեղեցւոյ ոչ էին մեկնեալ զայնցանէ նշանակեալ 'ի Քրիստոս. մանաւանդ զի եւ զբազում յայնցանէ առեալ էին Հրէայք վասն գալստեան Մեսիային և Թագաւորելոյ նորա որ 'ի հօրց անտի նոցա ակընկալէր, մանաւանդ 'ի ժամանակին յոր ծնաւ Յիսուս, վասնորոյ չը կարէաք առնել զայնս Դաւթի, կամ որդւոյ իւրոյ Սողոմոնի։

(Շարունակելի։)

## ՀԱՒԱՏՔ ԵՒ ՅՈՅՍ

Ո՛հ. ինչպէս մաքուր է և Աստուծոյ արժանի առանց զարմանալւոյ սրտի նուիրումը ՖԻՆԵԼՈՆ

Արդ փոխեցուր զմեզ քու Աստուածդ, ըսէ ազան թէ փոխնակ իր հօր վեհ մխիթարութենէն, հայր մը վէճ չը խնդրեր՝ այլ կը պատմէ. իր բարկութիւնը՝ իր առաւ հարուածոյն պէս

ապրող է , իր սէրը միայն յաւիտենա-կան ։ Աւաղին պատուիրանը չէ . « Եր-կիր 'ի Տեառնէ մինչեւ ցասկումն եւ ցարհաւիրս » այլ « Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ »։ Անգութներուն կը թողում անգութ կարծիքը , և իմ բնութենէս ծնունդ ա-ռած չարեաց ծանրութեան տակ ըն-թանալով կը գիտեմ այն որ բսաւ . « Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ »։ Արեւներուն Աստուածն , մարդոց Ա-բարիչը , թշուառաց ապաւէնը մարդ-կային ազգին բռնակալ չէ .

Աստուած իմ , Հայր իմ , ընդունէ այս հոգին որ խաւարի ծոցէն առ քեզ բարձրացաւ , այս միտքը որ քո լոյս կը փնտռէր , այս խորհուրդը որ կը փափաքէր զքեզ ըմբռնելու , և այս սիր-տը որ կը համարձակէր զքեզ սիրելու . Դուն զիս չը պիտի պատժես ճշմար-տութիւնը փնտռելուս համար , զիս չը պիտի պատժես քո բարի լոյսը հա-հաւատալուս համար , երբ բնութեան մէջ համայն տարերք բոլոր բարութեան վրայ կը խօսին .

Ինչպէս պիտի կարենամ հաւա-տալ քոյդ յաւիտենական վրէժխնդր-ութեան , երբ կը տեսնեմ՝ որ Արեւը իմ գլխուս վրայ կը փայլի , դաշտերը հունձքերով կը ծածկին . և քոյդ աջը իմ առջեւս կը սփռէ այն գանձերը , ո-րոց անարժան էի . ինչ որ մեղացս մէջ ինձ չտայեցիր՝ երկրաքարշ կիրքերէն հեռանալուս ատեն յինէն պիտի զլա-նաս . Մեղապարտ էի և ինձ պարգե-ւցիր անհուն փայելչութիւններ , տկար էի և զօրաւ և դուն զիս ներշնչեցեր գերբնական զգացում մը որ զիս առ քեզ կը կոչէր ։ Զոր մարդիկ զքեզ ի-րենց պէս չար ըրին , դժոխք , ապա-շաւանք , բռնութիւն դատապարտու-թիւն աղաղակեցին ; ես անոնց խօ-սքերուն շատ հաւատք չէի ընծայեր . բայց ով Աստուած իմ , 'ի քեզ ամ-էն հաւատք ընծայեցի .

Ինձ կըսէին թէ դուն սոսկալի ես , բնութիւնը ինձ կըսէր որ դուն բա-րերար ես , իմ սրտիս ձայն և խղճիս նախազգացումը ինձ կըսէին որ դուն ողորմած ես և գթած . անոնք զքեզ տխուրներուն Աստուած կը կոչէին , և օրուան տապ , որ իր լոյսը և արգա-սաւորութիւնը իր շուրջ դարձող բը-ռան բնին աշխարհաց վրայ կը հեղու , ինձ կըսէին թէ դուն անեղծից Աս-տուածն ես . Քո թագաւորութեանդ սահմանը անձուկ կը գծէին , ես չեմ կրնար ոչ սահմանը ըմբռնել եւ ոչ վախճանը մտածել . Քո պատուէրներն , ով իմ Աստուած , վրէժխնդրութիւն կը նզովին , դուն վրէ՞ժ պիտի լուծես .

Խեղճ մահկանացուի մը հրաման կընեն իր թշնամիները սիրելու , զքեզ արհամարհող որդը պիտի ջախջախե՞ս , իմ մտացս անկարողութենէն և հան-ճարոյս ոչնչութենէն առ ինձ առնե-լով զիս մշտնջենաւորապէս պիտի պատ-ժե՞ս . Ինչպէ՞ս կատարելութիւնը ան-կարութեան անաչառ պիտի ըլլայ , ինչ-պէ՞ս բարութիւնն զղջման անողոք պի-տի ըլլայ , մեծ փայելչութիւնն աշխար-հիս փշատակաց վրայ դժոխք և տան-ջանք պիտի՞ շալկէ , յորս բարութեան միայն կը հանդիպիմ .

ԷՄԷ ՄԱՐԹԷՆ — Թարգ . Զաքար Մ. Համբարձումեան , Ռախքաար . յԵրուսաղէմ .

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հետեւեալ հետաքրքրաշարժ կաւապաշտից պաշտամունքները, սովորութիւնները, արարողութիւնները, ձեւերը, հանդէսները, Գերապատիւ Ներսէս վարդապետի եւ Պրուսացի Սարգիս սարկաւագի 'ի Հնդստան նուիրակութեան օրագրութենէն, Արժանապատիւ Խորէն վարդապետն իւր պարապ ժամանակի մէջ հաւաքելով Հանդէսիս միջոցաւ կը հրատարակէ 'ի գիտութիւն հետաքրքիր Ազգայնոց։

ՀՆԴՍՏԱՆԻ կաւապաշտները բնութեամբ հեզ են և շատ երկչոտ, հաւանգամ չեն կրնար կռուել, վասն զի արիւնէն շատ կը վախնան. միս և հաւ չեն ուտեր, միայն ձուկը, եւ այն չէ թէ ամեն տեսակ ձգուկը.

Մրգեղէն կուտեն։ Գանգէս գետի ջուրէն 'ի զատ ուրիշ ջուր չեն խմեր։

Գանգէս գետի ջուրը նոցա համար սուրբ է. անոր համար երբ կաւապաշտից ջոկիրները Գանգէսէն ջուր կը տանին, բնաւ ջուրի ամանը գետին չեն դներ հանգչելու համար, մինչեւ որ իրենց տեղը հասնին.

Կաւապաշտները իրենց մեռելները կ'այրեն, հարուստները անուշահոտ փայտերով, աղքատները քիչ մը խանձելով Գանգէս գետը կը նետեն։

Հասարակ մեռելները հասարակ փայտով կ'այրեն.

Կաւապաշտները մեծաւ մասամբ հարուստ են և աղքատասէր, այնպէս քաղաքի մէջ գլխի բաց և մերկ կը շրջին, միայն իրենց տակամները ծածկելու համար մէկ մէկ սփածանիքներ կապուն, ոմանք հասարակ և ոմանք բեհեզեայ և ոսկեթել.

Սոցա կանայք իրենց ոտքը ոսկի և կամ արծաթ ապարանջան կը կրեն, այսպէս ալ բազուկները, գինդ յականջս, օղ 'ի քիթս, ապարանջաներէն ոսկի շղթայ և կամ մարգարիտ կը կախեն, մատանի և այլ զարդեր ունին, այնպէս բոկոտն կը շրջին.

Կաւապաշտները թէ այր եւ թէ կանայք, (բաց 'ի երախաներէն) ընկերութեամբ սեղան նստիլ և կերակուր ուտել չեն գիտեր, ամեն ոք կը պատուիրէ իրեն համար կերակուր պատրաստել և առանձին ուտել. Միմեանց կերակուրին բնաւ ձեռք չի պիտի զարնեն, եթէ գիտցածով և կամ անզգուշութեամբ մէկը ձեռք երկնցունէ, անմիջապէս այն կերակուրները դուրս թափելու է.

Կաւապաշտները մեծ մասամբ առանց իւղի եփած բրինձ և աղք տեղ քարի վրայ ձգելով իրարու հետ խառնելով կուտեն.

Պոմաց ազգը որ կաւապաշտից մէկ տեսակն է, շնչաւոր կենդանի չուտեր. կը կարծէ թէ մի գուցէ իւր ծնողաց և կամ մերձաւորաց և ազգականաց ոգին նոցա մէջ եղած լինի. Այս ազգը հոգեփոխութիւն կ'ընդունի.

Ասոնք սատկեալ կենդանիները խորոտիկ խորովածով կը շինեն կուտեն.

Այս ազգը սովորութիւն ունի տարին մէկ օր արմտիքներէն բաժին տալ իւր քուրմերուն, և այս բաժինը պէտք է որ հազար լինի, եթէ մրգեղէն է, հազար հատ պիտի լինի, եթէ ուրիշ այլ ինչ որ լինի դարձեալ հազար թիւովը պիտի լինի։ Եթէ մէկն չկարողանայ հազար թիւը տալ, պէտք է որ քանի մ'ընտանեաց հետ միանալ, ամենքը մէկէն դարձեալ հազար թիւ տան։

Այս տուրքը միայն կռոց և քուրմերուն տալ սովորութիւն չի կայ, անասնոց և թռչնոց եւս կու տան, բայց որուն որ տան, անոր երկրպագութիւն ընել անհրաժեշտ է.

digitised by A.R.A.R.@

Նաև սովորութիւն ունին տարին մի օր Բունկիններուն մէկին սենեակ գնալը, և միւս Բունկինները հոն հաւաքել, ուր մեծ Բունկին այսինքն քրմապետը բարձր տեղ մը բազմելով, ժողովուրդը անոր առջևը կենալով երկրպագութիւն կ'ընէ, և ձեռնամած 'ի գուճս նստած, աղօթք և խնդրուածները կ'ընեն քուրմէն, յետոյ փողերը և թմբուկները հնչեցունելով կը զարնեն և կը խաղան։

Ասոնք գրեթէ միշտ յարգանօք կը փութին իրենց Բունկիններու հետ և զայն տեսած ժամանակ իւրաքանչիւր գլխակոր աչք 'ի խոնարհ նայելով երեք անգամ 'ի գուճս անկեալ պէտի ըսէ. « Տէր գըթառատ, ողորմեա ինձ » և յետոյ երկրպագութիւն ընելով պէտի սկսի խօսիլ, ինչ որ պէտք է, և ինչու համար որ գնացած է։

Սակայն քաղաքի շուկաներուն մէջ երբ յարաբերութիւն մը չունին, անտարբեր են։

Պրմինները ազատ են, որ կրօնի որ ուզեն կրնան հպատակիլ, և զայս քարոզել. ըստ ամենայնի ազատութիւն է։ Միայն թէ կուռքերը չնախատեն եւ չանարգեն։ Եթէ մէկը յանդգնի նախատելու 'ի մահ կը դատապարտեն։

Հնդիկները երբ ուզեն կարող են իրենց կրօնքը փոխել, բայց հայրենի ժառանգութենէն զրկուած կը համարուին ըստ տեղական օրինի,

Պրմինները գլուխ բաց կը շրջին, ամենք թաշկինակ մը կը կապեն, երկայն և գեղեցիկ մազեր ունին, թէ այր և թէ կին, այր մարդիկ թէ և մազ չունին, երեսնին խապաւ գերծել կուտան. ուստի շատ ժամանակ կին մարդիկներէն չեն որոշուիր։

Բօնտուչէրի կռապաշտները միայն գագաթնին վրայ ծամ թող կուտան և ճակատնին երեք գիծ կը գծեն, որոց երկուքը ուղղակի և սպիտակ, իսկ մէջինը՝ դեղին և կամ կարմիր, և կամ ըստ քմաց այլ և այլ գոյներով կը ներկուին։

Ուանդնոյ քաղաքի Պրմի կռապաշտները ուրիշ քաղաքներէն աւելի սովորութիւն մը ունին, այն է, առհասարակ արք ոտքէն սկսեալ մինչև ցպարտ իրենց կռոց նուիրելի ծաղիկներով կը ծածկուին. նոյն իսկ կուռքերու և ամեն պաշտածներուն պատկերները ծեծել կուտան իրենց մարմնոյ վրայ բնաւ տեղ մը բաց չը ձգելով։

Եւ անոնք որ չեն ուզեր ծեծել տալ այս պատկերները, նոքա կը նախատուին։

Այս ազգի համար ձերմակ հովանոց առնելը արգելեալ է, վասն զի ձերմակ հովանոցը միայն կուռքերուն և թագաւորին կրնայ նուիրուիլ և ոչ ուրիշ որ և իցէ անձի։

Պրմինները երբ իրենց թագաւորին ներկայանան, նախ ներկայացողն պիտի երթայ նստի, զի ամենեւին ոտքի վրայ չի պիտի ելլեն, մինչև որ նախ թագաւորն ելլէ երթայ, յետոյ ներկայացեալն։

Պրմաց թագաւորութեան իշխանութեան տակը ութը միլիոն Պրմի ժողովուրդ կը հաշուուի իսկ մնացեալ Պրմինները Անգղիացւոց իշխանութեան տակն են։

Պրմաց թագաւորն իւր տուած հրամանագիրներու գլուխն այսպէս կը գրէ, « Ես արքայ ոսկէ պալատի, ոսկի գահու, սպիտակ փղի, սպիտակ հովանոցի, գեղեցիկ պարտիզի, երկոտասան դրամբ աղիւսաշէն մեծի բերդի, և բոլոր Պրմաստանու եւ նորին սահմանաց հրամայեմ » և այլն։

Հնդիկները սովորութիւն ունին վեց տարիէն մինչև ութ տարեկան լինիլն ամուսնանալ, ամուսնանալէն զկնի, եթէ կինը մեռնի, այրն ազատ է



digitised by A.R.A.R.@

ուրիշի մը հետ ամուսնանալ, սակայն կինը, ազատ չէ, եթէ երբեք աւուր ամուսնացած ալ լինի, չի կրնար ամուսնանալ. այլ ամուրի կեանք վարիլ պէտք է, յետ այնորիկ եւ գլխի մազերը կը գերծէ 'ի նշան սգոյ:

Պրմաց մէջ այր մարդ ազատ է առնել այնքան կին, որքան կարող է պահել. մանաւանդ թագաւորը չափազանց կին ունի:

Եթէ բազմակին Պրմինը սնանկանայ, կրնայ իւր առաջին կինը արձակել. զայն արձակելէն զկնի, իրաւունք կունենայ իւր երկրորդ, երրորդ, չորրորդ և այն կանայքն վաճառել:

Թէեւ Անգղիացիք այս օրէնքն ջնջելու կը ջանան գոնէ իրենց իշխած քաղաքներէն:

Պրմաց ննջեցելոց յուղարկաւորութիւնն.

Պրմինները ննջեցեալը դագաղի մէջ դրած, և դագաղը լծակէ մը կախուած, երկու այր իրենց ուսերուն վրայ առած կը տանին, երբեմն կառքով ալ կը տանին: Մեռելի առաջէն չորս կանայք չորս թապախով մրգեղէն կը տանին թռչնոց տալու:

Յուղարկաւորութիւնը փոխանակ տրտմութեան ուրախ և զուարթ կը կատարեն: Փողերով, թմբուկներով, խուռն բազմութեամբ կ'երթան դագաղին ետեւէն:

Եւ առհասարակ ձերմակեղէն կը հագնին, և ձեռքերնին մի մի խոշոր սիկար առած ծխելով կ'երթան: Էրիկ մարդերէն աւելի կանայք կ'երթան. բայց բնաւ լալ չկայ. ննջեցեալը երբեմն վանք տանելով կ'օրհնեն, և երբեմն վանք չեն տանիր, այլ այրելէն եւ երբեմն թաղելէն վերջ Բօնզին ննջեցելոյն տունը երթալով կ'օրհնէ, և զանոնք կը մխիթարէ:

Հնդիկ հաւատացեալները լուսնոյ բոլորուած ժամանակ կը սկսին ծնծղաներ զարնել, հրացաններ արձակել եւ աղաղակներով տունէ 'ի տուն շրջելով բրինձ, սիսեռ, և այլն կը մուրան, որպէս զի տանեն Գանգէս գետոյն նուիրեն, 'ի շնորհակալութիւն, որ ողորմելով իրենց զլուսին բռնող բռնաւորին հալածելով ազատեց նորա ձեռքէն:

Լուսնոյ այս խաւարումէն յետոյ սոցա քուրմ պրահմինները կը բաժնուին իրենց ժողովրդոց տուները և ութ օր ժողովրդին կերակուրները իրենք կեփեն, իններորդ օրը մեծ պարգեւ առնելով կը մեկնին: Այն ութ աւուր միջոցին տան տէրն իսպառ արգիլուած է խոհանոց մտնելէ. բայց 'ի բրահմինէն ոչ ոք կարող է խոհանոց մտնել:

Մանաւանդ առաջին օրը տան տէրն պէտք է որ Գանգէս գետէն տիղմ բերել տայ և խոհանոցը ծեփէ տիղմով. այսպէս ալ խոհանոցի ամանները բոլորն ալ նորոգելու է, որպէս զի պրահմինը նոր խոհանոցի և նոր ամաններու մէջ կերակուր եփէ:

Այս ժողովուրդը կով ալ կը պաշտէ ինչպէս որ շատ նիւթեր ալ կը պաշտէ, խոտելի գրութիւն ալ ունին որ կովու միզով կը լուացուին, երեսնին և բերաննին միզով կը ցողեն. եւ մարմիննին կ'օծանեն նովաւ: Այսպէս ալ իրենց տուները և անօթները կը լուանան և կ'օծանեն նուիրեալ կովու միզով:

Սոյն պաշտելի կովերը անարգել կերպով բաց գտած և ուզած տեղերնին կը մտնեն կերեն: Եւ ինչ ուտելիք որ գտնեն կուտեն. մէկն չարգիլեր զիրենք:

Պոմպէի մէջ կրակապաշտ և արեւապաշտ Պարսիկներ ևս կան: Կրակապաշտները, իրենց ննջեցեալները չեն թաղեր, և ոչ ալ կ'այրեն. այլ յատուկ տեղ ունին, ուր ննջեցեալը

digitised by A.R.A.R.@

գնելով թռչունները կուգան անոր ամբողջ միսը կ'ուտեն, յետ այնորիկ մեռելոյն տէրը կ'ուգայ ոսկորները կը ժողովէ և կը տանի ոսկերաց համար յատուկ սահմանեալ տեղը կը պահէ ։

Այս ցեղն ալ բազմակին է ։

Կոմպարշաները, երբ իրենց պաշտած կովը մեռնի, պատուաւոր կերպով և մեծ հանդիսիւ կը տանեն կը թաղեն ։ Եւ նորա հորթը պաշտելին տեղը յաջորդեցունելով՝ նըկանին զայն պաշտել ։

Պրմաց Բունկինները և Բնկուհիները այսինքն քուրմերը և քրմուհիները, ամենեւին չեն ամուսնանար, և եթէ ամուսնացեալ կանայք ուզեն բնկուհիներու կարգ մտնել, նախ պէտք է որ իրենց այրը ձգեն, և զգեստնին փոխեն և գլուխնին գերծեն ։ (Այս պարագայիս մէջ, այրն ամենեւին կարող չէ կնոջ վրայ բռնանալ և արգելուլ) ։ Զգեստ փոխելէն վերջ կ'երթայ նոցա շարքը կը՝գասուի, որքան որ կամի, և ուզած ժամանակը ազատ է դարձեալ զգեստ փոխելով դուրս ելլել և աշխարհական կարգի մէջ մտնել ։ Այսպէս ալ բնկուհին թողած այրը ազատ է ուրիշ կնոջ հետ ամուսնանալ ։

Բունկինները և Բնկուհիները շատ խստակրօն են և անոնցմէ խիստ պարկեշտ վարք կը պահանջուի, և ամուրի կենօք կ'ապրին կարի զգուշութեամբ ։ Երբ նոցա մէկին վրայ անբարոյականութեան կասկած լինի մինչեւ 'ի մահ դատապարտելու պատիժ կայ, վասն զի ազատ է ուզած ժամանակ թողուլ ամուրի կեանք և ամուսնանալ. ամենեւին ոչ արգելք ունի և ոչ նախատինք ։ Որքան ուզէ կրնայ իր կեանքը փոխել ։ Սոքա ամեն ութ օր անգամ մը գլուխնին կը գերծեն ։ Եւ դուրս ելլելու շրջելու արտօնութիւն չունին, մանաւանդ փոքր օրիորդ բնկուհիները ։ Այսպէս ալ խակ իրենց բնակած մեհենի մէջ ամեն մարդու չեն երեւիր ։

Բնկուհիները ձեռքերնին դրամ չեն առներ, վասն զի ծանր մեղք համարուած է ձեռքը դրամ առնելը, միայն թէ իրենց վրայ առած սփածանելի ետեւի կողմէն դրպան մը ունին, նուէր տուողը հոն կը ձգէ, և կամ թէ տակաւին նոցա կարգին չը մտած փոքր աշակերտները կընդունին զայն նուէրները ։

Բունկիններու վանքի մէջ յատուկ կերակուր չի պատրաստուիր, այլ նոցա աշակերտները՝ ամանը լծակէ մը կախած տունէ 'ի տուն կը շրջին իւրաքանչիւր տուն իր կերակուրներու առաջին անդրանիկ դգալը նոցա կը նուիրեն, յետոյ իրենք իրենց կերակուրը կ'ուտեն ։

Երբ ծնողք իրենց զաւակները կուզեն կռատան նուիրել, չորս օր մեծ ուրախութեան հանդէս և խնճոյք կը կատարեն, իրենց ազգականները և բարեկամները հաւաքելով, և նուիրեալն շքեղ կառքի մը մէջ բազմեցուցանելով քաղաքի մէջ հանդիսիւ կը շրջեցուցանեն 'ի տես ժողովրդեան ։

Պրահմիններու ժառանգները երբեք ուղղութեան օրէնքով փաստով, ապացուցով չեն հրահանգիր 'ի կրօնս, այլ ցնորքներով և սնոտի յոյսերով, կոյր տգիտութեան մէջ պահել շատ կը սիրեն ։ Յատուկ ուսումնարաններ վարժարաններ չունին, այլ միայն կռատանց մէջ կուսուցանեն մեծ մասամբ իրենց կրօնքն չը քննելը և ուրիշ ամեն կրօնքներէ խորշելը ։ Զի կ'ըսեն ամեն կրօնքներ սուտ են եւ մոլորութիւն. արտաքին գիտութիւններէ ալ կ'ուզեն հեռի մնալ ։ Քրմութեան համար պատրաստուածները կը վարժեցնեն մուրացկանութեամբ ապրելու եղանակներու մէջ, բերաննին եփած բրինձ

digitised by A.R.A.R.@

նետելով՝ մուրացկանութեամբ կը շրջին, տունէ ՚ի տուն մէկ մէկ քսակ վիզերնին կախած և ձեռքերնին մէկ մէկ փող, երբ դրամը ստանան փողերնին կը հնչեն : Կռապաշտները սովորութիւն ունին ամէն առաւօտ իւղով օծուիլ և արշալուսին շուտ ՚ի Գանգէս գետը կ՚երթան լուացուիլ և տեսակ տեսակ մրգեղէններ և գոյն գոյն անուշահոտ ծաղիկներ ձկան ձեւ թէփսիի մէջ գնելով հետերնին կը տանեն Գանգէսին նուիրելու :

Երբ գետի եզերք կը հասնին, անխտիր ամէն կողմ՝ գետին իյնալով երեսի վրայ երկար ժամանակ մնալէն յետոյ կելլեն գետի եզերքը ջուր կը մտանեն, և մատով ջուր առնելով ճակատնին կը քսեն, յետոյ աչքը, ականջը, գագաթն և այն, եւ աղօթելով կը լողանան : Ջուրէն ելլելէն զկնի դարձեալ երեսի վրայ ինկած երկրպագութիւն կ՚ընեն, և կը թաւալին հողերուն վրայ : Յետոյ գետէն ջուր առնելով հետերնին կը տանեն :

Ամէն երեկոյ ՚ի պատիւ Գանգէս գետին ճրագները կը վառեն գետի եզերքը : Նոյն տեղերը շատ մը կռապաշտ ճգնաւոր ուխտաւորներ կան, բայց ճրագարաններու տեղերը ելլելու իրաւունք չունին, որ բարձր տեղ մի է և գլուխը երկաթ :

Այն կրօնաւորները որ նուիրեալ կը համարուին, ՚ի խորգ և ՚ի մախիր նստած ցորեկ արեւանկէզ կը լինին, անձրեւներու տակը, գիշերը զով ցողի տակ կը հանգստանան, թէեւ հովանոցներ ունին, բայց ոչ արեւի տաքութեան եւ ոչ անձրեւաց օգուտ ունին : Ասոնք շարունակ աղօթքի կը պարապին և մերկ են, միայն իրենց առականքը կը ծածկեն :

Հեռի երկիրներէն կռապաշտները բոկոտն երեք ամիս քալելով այն գետին ուխտի կու գան : Թէպէտ այս օտարներու համար փոքր խուցեր շինուած են, որոց մէջ կը պատսպարուին և յետ դառնալոյն գետի ջրէն կը տանին հետերնին առանց գետին գնելու, միայն թէ քնացած ժամանակը եռոտանիի վրայ անօթ մը ունին հաստատուած, անոր մէջ կը գնեն ջուրը երկրէն բարձր :

Այս ջուրը երբ իրենց երկիրը կը հասցունեն իրենց լուացուելի ջուրի մէջ մէկ մէկ կաթիլ կը կաթեցունեն, և անով կ՚օծուին :

Կռապաշտները ՚ի պատիւ Հօլի կռոյն տօն կը կատարեն, կարմիր գոյնով կը ներկուին և կը սկսին պարել մինչև երեկոյ, արեւ մանելէն վերջ կը սկսին իրարու վրայ ջուր սրսկել, և ծաղրածութեամբ դռներէն պատուհաններէն անցնող դարձող կռապաշտ ժողովրդոց վրայ աղբիւս կը ցանեն, այս տօնի օրը գրեթէ ամէնքը մոխրով ծածկուած կը տեսնուին :

Ոմանք ալ դիմակներով և գոյնզգոյն ներկերով խայտաբղէտ կը ներկուին, և թաղէ ՚ի թաղ անլսելի հայհոյութեամբ կը շրջին :

Խապար ազատ են իրենց ուզածն ընելու այն հանգիսի օրը, մինակ թէ օտար ազգաց վնաս չի պիտի տան, և իրենք իրենց մէջ կռիւ չի պիտի յարուցանեն : Կառավարութիւնը միայն այս չափին կը հսկէ :

Մանտելոյ Թագաւորանիստ քաղաքի մէջ Փուճի կուռքին յանկարծական տուանքը կը պատրաստեն հետեւեալ եղանակաւ :

Թագաւորի քոյրը արեւելեան Թագուհի կ՚անուանի, իսկ իւր առաջի կիներէն երեքն արեւմտեան, հիւսիսային և հարաւային Թագուհիներ կը համարուին :

Այն չորս Թագուհիները Թագա-

digitised by A.R.A.R.@

ւորի պալատին մէջ երկու ժամու մէջ բամբակի հունդ ցանելով, զարմա֊նելով, հասցունելով, քաղելով զտելով գզելով մանելով հիւսելով և իրարու քով բերել կարելով իրենց մեծ կուռ֊քին կը նուիրեն։

Այս գործողութեան մէջ նշանա֊կութեան արժանի է այդ կնանց կերպ ճարպիկութիւնը, որք այն տե֊սակ շարժումներ ունին, կը կարծուի թէ իսկ իրօք բան մը կ՚ընեն։ Եւ թա֊գաւորը բարձր տեղ մը նստած հան֊դիսատես կը լինի։ Երբ այն կանայք այս գործողութեան մէջն են, յանկար֊ծակի մարդ մը յառիւծ ձևացեալ նո֊րա մորթի տակ պահուած նոցա, այս֊ինքն կնանց վրայ կը յարձակի, նոքա ալ մի կողմէն իրենց գործը շարունա֊կելով, միւս կողմէն առիւծը վարելով յիշեալ սաւանը կը պատրաստեն և կը ներկեն ու բարձր ձողի մի ծայր կապե֊լով երեք թագուհիները իրենց օգնա֊կաններով մէկ տեղ զայն թագաւորին կը նուիրեն, և թագաւորն ալ իւր քոյր արեւելեան մեծ թագուհւոյն կը նուի֊րէ, որուն վրայ ջուր սրսկելով հասա֊րակութեան կը յանձնեն։ Նոքա նոյն մեծ հանդիսիւ կը տանեն իրենց մեծ աստուծոյն կը նուիրեն։ Եւ իրենց ջերմ շնորհակալութիւնը կը յայտնեն, որ քիչ ժամանակի մէջ այսպիսի բարիք մը հրաշագործեց թագուհիներու ձեռօք։

Հնդիկները Ոսքուճայ բուսած սե֊կուոյն հարսանիք կը կատարեն մեծ հանդիսիւ, թափօր կազմելով յաջմէ և յահեկէ։ Զահընկալները երեսնի չափ հատ քալելով, և առջա ետեւէն Բագ֊նին նուիրեալ դրօշակները և ասոնց մէջ ոսկէ սանձիւ պալարակալ պըճ֊նեալ և հիանալի զարդերով զարդար֊ուած չորս երիվարներ և ասոնց ե֊տեւէն կը քալեն երկու կողմէն չորս հարիւրի չափ մանուկներ, ասոնց մէջ անդէն Անգղիացւոց երաժշտա֊կան զօրքն փողերով և թմբուկներով և առջա ետեւէն պատգարակի մէջ կուռք մը բազմած բազմապաճոյճ ճո֊խութեամբ զանազան զարդերով զար֊դարուած և չորս սիւներու վրայ հաս֊տատուած հովանոց մը որ հովանի կը պահէ, և անոր բոլորտիքը շուրջ պա֊տած են լապտերներ և ջահեր որք Հնդ֊կաց աստուածն կը լուսաւորեն։ Եւ հովահարները երկու կողմէն ծածանկնե֊րը կը հովածեն, որ չհարուածեն իրենց աստուածը։ Եւ անուշահոտ ծխանե֊լիները կը ծխեն բուրումն յանուշա֊հոտութիւն։ Եւ անհամար Հնդկաց բազմութիւնը եւ քուրմերը առաջէն և ետեւէն ուրախութեամբ երթալով կը շրջին թաղէ ՚ի թաղ ՚ի կատարումն անզգայ կուռքի երեւելիական հար֊սանեաց։

Կոյ Գէորգէյ--Բէ--Նը։

Կալկաթայու Հնդիկ կռապաշտնե֊րը սովորութիւն ունին տարին անգամ մը իրենց քաղաքէն փայտեղէն և կա֊ւեղէն չաստուածները Գանգէս գետը ձգել։

Այս ժողովուրդը այլ և այլ նիւ֊թեղէն կուռքեր շինելով իրենց տան մէջ պահելով կը պաշտեն եւ անոնց առջեւը խնկելով երկրպագութիւն կը֊նեն եւ զանազան զարդերով զանոնք զարդարելով անուշահոտ խնկելիներ կը ծխեն եւ ճրագներ կը վառեն ա֊նոնցմէ հայցուածներ եւ բարեմաղ֊թութիւնները կ՚ընեն։ Շատ երկիւ֊ղածութեամբ և ակնածութեամբ կը մօտենան անոնց, և իրենց գործերուն յաջողութիւն կը խնդրեն, մինչեւ տա֊րեգլխոյն։

Երբ տարեգլուխ կուգայ, այն կուռքերը աւելի զարդարելով, մեծ

digitised by A.R.A.R.@

հանդէսներով փողերով եւ թմբուկներով մեծամեծ ուրախութիւններով քաղաքի փողոցներու և հրապարակներու մէջ կը շրջեցունեն, յետոյ Գանգէս գետի եզերքը տանելով սաստիկ կերպով կ'անարգեն և կ'անպատուեն ու անոնց երեսը կը թքանեն կը նախատեն և կը հեգնեն աքացի և բռնցի կը ծեծեն թէ ինչու մեր ամեն հայցուածները չը տուիր, մեր խնդիրները չը կատարեցիր, ուրեմն արժանի ես գետակուր լինելոյ, ըսելով գետն կը նետեն, և յետ դառնալով նորէն շուկայէն ուրիշ կուռքեր գնելով իրենց տուները կը տանին պաշտելու համար։ Եւ ամեն տան մէջ անպատճառ պէտք է որ կուռք գտնուի։

Այս պատկաւ կը պատկէն կռատանց մէջի կուռքերը եւս։

Իսկ այն կուռքերը որք հարուստ են կամ ոսկիէ և արծաթէ և այն թանկագին նիւթերէ շինուած են և կամ նուրբ զարդարուած, անոնք եւս մի և նոյն կերպով կը տանին, և ամեն արարողութիւն եւ նախատինք կուտան. բայց գետը չեն ձգեր, այլ նաւակի մէջ դնելով գետի մէջտեղը տանելով, կ'ըսեն իրեն, մեր խնդիրները չի կատարելուդ համար արժանի էիր այն ամեն նախատանաց որովք նախատեցար։ Բայց որովհետեւ մեր նախատինքները համբերութեամբ տարար, մեզ չը բարկացար և զմեզ չը պատժեցիր, ուրեմն մենք եւս զքեզ մաքրելով այս սուրբ ջրով (երեք անգամ ջուր կը լեցունեն գլխուն վրայ) և յետ դարձունելով դարձեալ (հանդիսիւ և պատուով) մեզ աստուած կ'ընդունիմք զքեզ. միայն թէ յետ այսորիկ մեր հայցուածները եւ խնդիրները կատարէ։ Այս եղանակաւ հարուստ կուռքերը յետ կը դարձնեն և կը պաշտեն։

(Տարր—Նաւկիլէ.)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ յանձնուած հետեւեալ նամակն յօժարութեամբ կը հրատարակենք, յուսալով որ մեր սիրելի Ազգայինք տպագրութեան բաժանորդ կը գրուին այնպիսի մի գրաւոր երկասիրութեան համար, որ, ըստ յայտարարութեան նամակին, անշուշտ հարցասիրական պիտի լինի իւր պարունակութեամբ բնիկ հայեցի վիպաց և անցից։

Ռուսաստանի Հայ վիպագրութիւններէն արդէն յայտնի են բանասիրաց անմահ Աբովեանի ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ և Պ. Պռոշեանցի ՍՈՍ–ՎԱՐԴԻԹԵՐՆ, նամակագիր Բարխուդարեանցի աշխատասիրութիւնն երրորդն պիտի լինի այն օրինակ հրատարակութեանց մէջ։

Մեք շատ ուրախ ենք, որ մեր գրագէտներն մեր ժողովրդեան կեանքին կը մտնեն և այն հանքը կը հետախուզեն, որ արժանի է հետախուզութեան։ Մեր ազգային ժողովրդականութիւնն սիրելու համար՝ պէտք է որ մեր ժողովուրդն ճանաչենք իւր ամեն կատարելութեամբ և թերութեամբ. իսկ ժողովուրդն ճանաչելու համար՝ պէտք է որ ուսումնասիրենք նորա կեանքն ու կենցաղն, նորա սովորութիւններն, նորա ուրախական և տրտմական հանդէսներն, նորա սիրոյ և խանդից զեղմունքներն։ Սէրն, որ մի հզօր ազդեցութիւն ունի մարդկային կենաց վերայ եւ արտայայտութեան բիւրաւոր ձեւեր, արդեօք ինչպէս կ'արտայայտի հայեցի ընտանեկան կենաց մէջ, ծնողական և որդիական պարտաւորութեանց մէջ, նշանտուքական և ամուսնական կապակցութեանց մէջ։ Շատ և շատ նահապետական սիրուն սովորութիւններ կան Հայաստանի գիւղական կենաց մէջ, որոնք խիստ սովորա-

digitised by A.R.A.R.@

ծանօթ էին դրսուր աշխարհին, և որոնք փոխանակ քաջալերութեամբ պաշտպանուելու, օր աւուր կ'անհետին, ուր և ժողովրդային կենաց շուքն ու վայելչութիւնն կը վերանայ:

Մեր ժողովրդային կենդանութիւնն կը պակսի և մեք բոլորովին անտարբեր եմք: Ժողովրդային կենդանութիւնն կը պակսի ոչ միայն ընտանեկան շրջանին մէջ, այլ և իւր բնական մարմնամարզիկ կրթութեանց մէջ: Ձիավարժութիւնն, որսորդութիւնն, զինախաղութիւնն, որոնք պատանեկական կըրթութիւններ էին Հայաստանի շինական կենաց մէջ, այժմ երիտասարդներուն համար անգամ հրապոյր չունին: Առաջ աներոջ ընտիր նուէրն իւր առոյգ փեսացուին զէնքեր էին և՛ նժոյգ, և փեսան իւր պակէն զինի՝ անշուշտ համօրէն փեսաւէրաց առջևէ պէտք է թագն 'ի գլուխ իւր որսորդական ճարտարութիւնն ցոյց տար, հետևաբար նշանին զարնէր հրացանի գնտակաւ և իւր ամուսնական թագաւորութեան Կեցցէն լսէր բոլոր հանդիսականներէն. իսկ այժմ այս առնացի կրթութիւններն սպառելու վերայ են և հազիւ ուրեք հետքերն կը նշմարուին:

Ուստի քաջալերութեան արժանի են այն ժողովրդային վիպագիրներն, որոնք Հայաստանի շինական կենաց պատկերն պահպանելու համար՝ 'ի գիր կ'արձանայնեն զայն և ներկայ սերունդին կը նուիրեն, կենդանութեան աշխոյժ արծարծելու համար: Քաջալերութեան արժանի է, հետևապէս, և Բարխուդարեանցն, որ իւր հեռաւոր նահանգաց ազգայնոց օգնութեան կը դիմէ իւր երկասիրութիւնն հրատարակելու համար:

---

## ՆԱՄԱԿ

Հայրենասէր եղբայր:

ԺԱՄԱՆԱԿՆ, որ իւր ամենածախ ժանիքներովն աշխարհիս մէջ գտնուած ազգ և ազինք ծախելով ոչնչութեան մէջ անյայտ արած է և տակաւին կ'անէ, երբէք չը կարողացաւ և բնաւ չէ կարող ծախել առաքինեաց և դիւցազանց արարքներն. չէ կարող ջնջել նոցա յաւերժական յիշատակներն և իւրեանց գիտակաց հետ 'ի խորս գերեզմանաց թաղել նոցա անմահ անուններըն: Քանզի ամենայն դարուց մէջ գտնուած են հայրենասիրութեամբ վառուած վեհ անձինք, որք առաքինեաց և դիւցազանց անուններն և քաջագործութիւններն ոսկեղէն տառերով դրոշմել տուած են պատմութեանց և վիպասանութեանց էջերու մէջ, որք մինչև ցայսօր անջինջ մնացած են յաջորդ սերնդոց մէջ:

Ներկայ դարուս մէջ, Հայրենասէր Եղբայր, նոյն սուրբ նախանձու ազգասիրութեան կրակն Ձեր սրտի մէջ ես վառուած կը տեսնուի, որով խնդրեցիք յինէն Խնածախցի Մերզայի և Աննայի վիպական անցքերն գըրել, որք անտարակոյս եմ, թէ անհաճոյ պիտի չերևուին Հայ Հայրենեաց առանին կենդանի սիրող ազգայնոց:

Կը խոստովանիմ, որ Ձեր այս խընդդիրն իմ կարողութենէս վեր էր, բայց առ Ձեզ ունեցած եղբայրական սէրս կը ստիպէր զիս չը խուսափել: Քանզի Ձեր այս նպատակն յաւէտ ընդհանուրի օգտին պէտք է ծառայէ. որով կ'ուզէք անցեալն յիշատակն անկորուստ պահպանել, ներկայիս երիտասարդաց և օրիորդաց ամուսնական ճշմարիտ սիրոյ օրինակ մի տալ և ապագային զգուշութեան տիպար ընծայել: Վասն որոյ առ Ձեր ներող-

digitised by A.R.A.R.@

մտութեան վերայ վստահանալով ձեռնարկած եմ՝ և առ պտուղն մտո է այգէն, զոր Ձեզ պէտք է նուիրեմ իբրեւ իմ՝ երկասիրութեանս առաջին պտուղ։

Բայց, Հայրենասէր Եղբայր, թէև ներկայ դարուս մէջ մերազնեայ ուսումնասէրներէն ոմանք Եւրոպական վիպասանութեանց ձեւերն, ոճերն և գործուածներն կը սիրեն. սակայն ես ընտրեցի Հայաստանի ոճով գրել այս վիպասանութիւնն, որ թէև անշուք, բայց հայրենի ձեւ և տիպար կը կրէ։

Այն վիպասանութեան մէջ ակներեւ պէտք է տեսնէք, որ սէրն կը խօսի, քան թէ լեզուն, զգացումն կը խօսի, քան թէ բերանն, սիրտն ու հոգին, քան թէ Մերգայ եւ Աննայ։ Այն վիպասանութեան մէջ պէտք է պարզապէս տեսնէք, որ Մերգայի եւ Աննայի սէրն չը նմանիր այն երիտասարդաց և օրիորդաց սիրոյն, որք յետ նշանախօսութեան առ ժամանակ մի զիրեար պատրելէն զկնի կը բաժնըւին՝ կեղծ անուն թողով հասարակութեան մէջ։ Պէտք է տեսնէք, որ Մերգայի և Աննայի նշանտուքի հին ժամանակիս նշանտուքներու պէս նիւթական շահուց եւ ակնկալութեանց վերայ չէր հաստատուած, այլ հաւատարիմ սիրոյ, փոխադարձ զգացմանց և համամիտ կամաց վերայ։ Պէտք է տեսնէք, որ Մերգայի և Աննայի ապագայ միութեան և երջանկութեան կապն մեծագումար ոսկիներով և ծանրագին օժիտներով կապուած չէր, որովք շատ անգամ ամուսնութեն երջանկութիւնն թշուառութեն կը փոխուի, խէթ և ատելութիւն կը սիրեն, սէրն կը տարագրի ընտանեկան յարկէն, անհաւատարմութիւնն մուտ կը գտնէ արձակ համարձակ, և անբարոյականութիւնն կը տապալէ ընտանեկան կենաց սուրբ շինուածն. այլ կապուած էր այն մեծ և եղեմական սիրով, որովք գերդաստանք կը սրբանան, ընկերականութիւնն կ՚ազնուանայ և ազգ ու ազինք կը վերականգնին։

Հայրենասէր Եղբայր, այս գործոյ մէջ կատարուած խօսութիւնքն այնքան ճշմարիտ են, որ իրական պատմութեան տիպ կը կրեն, բայց որովհետեւ Հայաստանի շինական կենաց, սովորութեանց և ներկայ յարակից անցից նկարագիրներ կան, ուստի լաւ համարեցի վիպասանութիւն անուանել։

Այն վիպասանութեան մէջ ջանացի ամփոփել քաղհանուորաց, հնձողաց, հարսանեաց եւ բարեկենդանի երգեր եւս, որք ոչ միայն Մերգայի և Աննայի վէպին փայլ կը տան, այլ եւ խիստ հետաքրքրաշարժ պէտք է լինին մեր հեռաւոր ազգայնոց։ Վիպասանութեանս լեզուն՝ այն նահանգի լեզուն է, բայց ՚ի երգերէն և մի քանի նամակներէ, որք Արարատեան բարբառոյ տիպ կը կրեն։

Արդ՝ կը խնդրեմ ուրեմն, որ այն նամակն իբրեւ յառաջաբան հրատարակել տաք Վանեցոց ՄԽՕՆ հանդէսին մէջ, որպէս զի բանասէր ազգայինք բարեհաճին բաժանորդագրել ինչպէս աստ ՚ի Ռուսաստան, նոյնպէս և ՚ի Տաճկաստան, ուր առանձին նամակաւ գործակալ նշանակած եմ ՚ի Պօլիս Մեծ. Խմբագիրն ՄԱՍԻՍ լրագրի և ՚ի Զմիւռնիա Արժ. Պետրոս վարդապետ Ներկարարեան, բաժանորդագին նշանակելով իւրաքանչիւր օրինակին 3 հինգ՚նոց, որ խիստ չափաւոր է երկասիրութեանս ստուար գրից նկատմամբ. Ուստի գործոյս տպագրութեան մասին բաժանորդաց քաջալերութեան սպասելով, մնամ եղբայրութեանդ երախտապարտ,

Ռ. Գ. Բաղխտաբարեանց.

1874 Հոկ. 20. Դ Ղարաբաղ։

digitised by A.R.A.R.@

# ԵՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱԿԱՆ ԽՆՃՈՅԻՑ

ՄԻՇՏ ման եկի Շաքի, Շիրուան, Շամախի,
Գիշեր, ցերեկ քաղքից քաղաք չորս տարի.
«Ամեն ցաւոց ի՞նչ է դեղ» ես հարցրի,
Ողջ բժիշկներ ինձ ասացին «լաւ գինի»:
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խըմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
Ախ, տէր տէր ջան, ես այն օրից ուխտ արի,
Հացի վերայ միշտ գործ ածել լաւ գինի.
Փորձով տեսի, հոգւով մարմնով հիւանդի,
Մի հատ բժիշկ, դեղ ու ճարն է լաւ գինի.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խըմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
Ազնիւ գինի, ո՞վ կարող է քեզ գովել,
Քո յատկութիւնքն մին մին կարգաւ լոխ[1] շարել.
Աշխարհ ողջ թուղթ, ծմակ ղալամ[2] էլ լինին,
Մէջ ոք կարէ քո գովասանք լի գրել.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խըմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
Ազնիւ գինի, երբ քո շիրան[3] կարասում,
Կըծպըծում[4] է, եռում, եփում, պըճպըճում[5].
Երբ կուլայից[6] ձայն ես տալիս բըլ-բըլում[7],
Կեա՛նք ես կանչում, անմահութիւն խոստանում.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խըմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
Ազնիւ գինի, դու աննըման, երկնային,
Յատուկ շնորհուած մի մեծ պարգեւ ես անգին.
Մեծ, զօրութիւն, խե՛լք եւ շնո՛րհք ամենին,
Միշտ դու կը տաս քեզ չափաւոր խըմողին.

1. Լոխ. բոլոր, ամբողջ. 2. Ղալամ. գրիչ. 3. Շիրայ. նոր քամուած գինի. 4. Կըծ-կըծել. եփելու ժամանակ փայլել. 5. Պըճպըճել. եռալ. 6. Կուլայ. գինւոյ հողէ աման. 7. Բլբլել. նեղ պարանոցով ամանէ թափուած գինւոյ բլը՛, բլը՛ ձայնը.



digitised by A.R.A.R.@

Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք կենաց ողջ չափաւոր խմողի:
Ազնիւ գինի, երբ քեզ խմէ խեղճ մշակ,
Կը մոռանայ աւուր քաշած աշխատանք.
Դու կը բանաս նորա փակուած ախորժակ,
Ցամաք հացըն հէնց կը գըղէ մեղր, կարագ.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք կենաց ժիր մշակաց Հայ ազգի:
Ազնիւ գինի, երբ քեզ խմեն ծերերը,
Իսկոյն կ'ուղղըին նոցա ծռուած մէջքերը.
Կը սըղալեն [1] իւրեանց մօրուք, պեխերը,
Եւ կըսկըսին լաւ պատմութեանց հիները.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք բաժակ ողջ ծերունեաց Հայ ազգի:
Ազնիւ գինի, երբ քեզ խմեն պառաւներ,
Շուտով փայլին նոցա աչաց մութ բիբեր.
Տեսնես ի՛նչպէս կը վըվլըղան լեռներ [2];
Եւ կը գիզուին բուրդ, բամպակի կծիկներ.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք բաժակ ողջ պառաւանց Հայ ազգի.
Ազնիւ գինի, երբ քեզ խմեն գըղիրներ [3],
Շուտ կը տընկուին նոցա կախուած գլուխներ.
Մի վայրկենում՝ պըտոյտ կ'անեն ողջ տուներ,
Պատուէր կը տան ինչպէս Շահի վէզիրներ.
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք կենաց բոլոր գըղըրաց Հայ ազգի:
Ազնիւ գինի, երբ քեզ խմեն զօրականք,
Մատաղ կ'անեն 'ի սէր ազգի մահ ու կեանք.
Առիւծք եռան, սրտեր թնթան կարգ 'ի կարգ
Վազեն յառաջ 'ի թշնամեաց մեծ բանակ.
Սուրեր շողան, թօփեր տեղան շատ գնդակ,
Զօրք որոտան, սարեր կրկնեն արձագանգ.
Ա՛ռ, մատռուա՛կ, ո՞ւր զօրականք Հայ ազգին,
Ո՞ւր է բաժին նոցա կենաց թունդ [4] գինին:
Ազնիւ գինի, երբ քեզ խմեն հիւանդներ,
Դէն կը գըցեն բարձ ու տէօշակ, եօրղաններ.
Կը փըլփըլան վարդի գունով երեսներ,
Եւ կըստանան նոր կեա՛նք, ոգի՛, նոր սրտե՛ր,
Դէ՛, մատռուակ, լի՛ անապակ ած գինի,
Խմենք կենաց ողջ հիւանդաց Հայ ազգի:

1. Սողալ. ողջել. շոկել. 2. Լեռան. Խախտարակի քահան. 3. Գեղիր. գիւղի մասն անդրադ երկրորդն. 4. Թունդ. — Թնդալով. զօրանալով. ուրախանալով.

digitised by A.R.A.R.@

Անո՜ւշ գինի, երբ քեզ խմեն հայրսուրբներ,
Վարուց Սրբոց կը լինին քաջ պատմիչներ.
Շուակներով կը տան սիրուն խրատներ,
Լխանալով կը զարմանան լսողներ.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց կրօնաւորաց Հայ ազգի.
Անո՜ւշ գինի, երբ քեզ խմեն քահանայք,
Մաշտոցն առած շուտ կը վազեն տունօրհնանք [1].
Անգիր [2] կ'ասեն աղօթք, մաղթանք, շարականք,
Սրտով կ'օրհնեն տաշտ ու կարաս, եղամանք.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց քահանայից Հայ ազգի:
Կարմիր գինի, երբ քեզ խմեն տիրացուք,
Պիւլպիւլի պէս կ'անեն պէս պէս ծլվլուկ.
Երգեր, խաղեր, տաղեր կ'երգեն կլկլուկ [3],
Կը զարդարեն կնունք, հարսնիք ու խնձոյք.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց բոլոր դպրաց Հայ ազգի.
Կարմիր գինի, երբ քեզ խմեն աշուղներ,
Կ'եռան, կ'եփին եւ ջօշ [4] կը գան սուրբ էշխեր [5]
Լեզու կ'ելնեն սազ, քեամանչայ, սանթուրներ,
Կ'ածեն, կ'անչեն լաւ ու ընտիր շատ երգեր.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց ողջ աշուղաց Հայ ազգի:
Կարմիր գինի, երբ քեզ խմեն սազանդէք [6],
Ձայն կը հանեն փող, տըմպլըպաղ [7] եւ զուռնէք [8].
Եալլի [9] կը տան քաջ տղամարդք եւ փեսէք,
Պար կը բռնեն հարսըն ու աղջիկ եւ տղէք.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց սազանդայից Հայ ազգի:
Անո՜ւշ գինի, դու դատաւոր արդար ես,
Ով քեզ խմէ իր չափից դուրս, կը պատժես.
Ցեխի, ձիւնի, փոշւոյ միջում կը թաթխես,
Եւ կատարեալ Մոխրաթաւալ մի կ'անես.
Դէ՜, մատռուակ, լի անապակ ած գինի,
Խմենք կենաց ողջ չափաւոր խմողի:
Ով սուրբ գինի, դու ամենից կը սիրուիս,

1. Տնօրհնէք. տուն օրհնէք. 2. Անգիր. այսինքն գոց. 'ի բերան. 3. Կլկլուկ. գեղգեղանք. 4. Ջօշ գօշ. բանաստեղծական աւիւնն շարժիլ. 5. Էշխ. աւիւն, եռանդ. 6. Սազանդէք. փողահարք. քնարահարք և այլն. 7. Տմբլպաղ. փասոլ. նաղարայ. 8. Զուռնայ. շեփոր. 9. Եալլի. պարուց այն եղանակն է, որով շատ անձինք շղթայաձեւ կապուելով կը պարեն միմեանց ձեռքից բռնած.

digitised by A.R.A.R.@

Դու՛ օրհնուած ես, դարձեալ Տէրից օրհնուիս.
Ա՛յս, կը կանչեմ բոլոր սրտով Քրիստոսիս,
Որ անպակաս Հայ սեղանից դու լինիս.
Դէ՛, մատռուակ, լի անապակ ած գինին,
Խմենք, փառք տանք, երկնից երկրիս մեծ Տէրին.

Ինչ սեղանում քո բաժակներ գըտնուին,
Ղարիպ եղբարց անուններն կը յիշուին.
Բաժակ բաժկի ծընկծընկալով կը թխուին 1,
«Խերով, բարով գան» ասելով կը կռնծուին 2.
Ա՛ս, տէր տէր ջան, լի բաժակներ էս 3 գինին,
Խմենք կենաց ողջ ղարիպաց Հայ ազգին.

Ազնիւ գինի, երբ դու չը գաս ՚ի սեղան,
Տխուր կ՚անցնին կընունք, հարսնիք, բարեկենդան.
Իսկ հոգեհաց կամ ժամահաց երբոր քեզ հետ միանան,
Ցընծան երեսք, փայլին աչեր, բերանք լինին օրհնաբան.
Ա՛ս, տէր տէր ջան, լի բաժակներ էս գինին,
Խմենք հոգւոց ննջեցելոց Հայ ազգին:

Ո՛վ սուրբ գինի, ո՞վ կարէ քո արժանին,
Գովել խօսքով, կանչել ձայնով բիւրից մին.
Ների՛ր քո խեղճ ծառայ ՈՒՍՏԱՑ ՋԱՄԱԼԻՆ,
Որ չարին թողուց երգիս լըսողաց սուր խելքին.
Դէ՛, մատռուակ, լի անապակ թաս վերջին,
Ա՛ծ, որ խմենք, պատուով վերջ տանք մեճլիսին.

1. Թխէլ. զարնել բաժակ բաժկի. 2. Կռնծէլ. պարպել. խմել. քամել. 3. Էս. այս.

## Առ խմբագրութիւն ՍԻՕՆԻ

Երկու անգամ է որ Մասիս պատուական լրագրի (ոչ խմբագրէն շարագրուած) բանասիրական յօդուածոյ մէջ անհարկութիւն կըլլայ, որպէս թէ մենք գիտութեամբ Գեր. Խորէն Եպիսկոպոսի տաղաչափական մի երկն մեզ սեպհականելով Սիօնի մէջ հրատարակել տուած ենք։ Առաջին անգամին անգիտական յարձակում մը համարելով՝ առանց ուշադրութեան թողինք, բայց երբ երկրորդեցաւ սոյն անհարկութիւնն թէ առ մեզ և թէ առ Սիօնն՝ ստիպուեցանք հետամուտ ըլլալ, մեր տաղաչափական տետրակներն խառնել, (զորս աշակերտութեան ժամանակէն 'ի վեր պահպանած եմք) Մասեաց Աղաւնին գտնել եւ համեմատել, որով և երեւեցաւ որ 'ի Գեղեցկանս պանդուխտ Հայոց երգն թէև մեր տետրակին մէջ կը գտնուի, բայց մերն չէ եղած, այլ աշակերտութեան ժամանակէն օրինակած ըլլալով և երկար տարիներ անցնելուն պատճառաւ ընդօրինակութիւնն մոռնալով և կարծելով թէ մեր շարագրածն է, Սիօնի մէջ հրատարակել տուած ենք մեր միւս տաղաչափական գրուածոց հետ, զորս դարձեալ նոյն տետրակէն քաղած ենք, և ընթերցողք անշուշտ կարդացած են Սիօնի մէջ։

Սխալմունք մ' է այս, զոր կը խոստովանինք հրապարակաւ և սոյն սխալմունքն յայտ է նաեւ անտի, որ նոյն ոտանաւորն տղայութեան հասակի գործ համարելով տեղ տեղ վերստին սրբագրած եմք և ապա հրատարակութեան տուած։ Ցաւ է մեզ տեսնել որ Սիօնի խմբագրութիւնն եւս մեր պատճառաւ կը թշնամանուի իբրեւ մեր սխալման մասնակից։ Սիօնի խմբագրութիւնն Հայոց բոլոր տաղերն, երգերն եւ բանաստեղծութիւններն անգիր սերտած չէր. որ իմանար թէ նոյն երգն Գեր. Խորէն Եպիսկոպոսինն է և վերստին չը տպագրէր զայն. այսպիսի տարապայման պարտաւորութիւն և ոչ մի խմբագրութենէ կարելի է պահանջել։

Արդ մեր սխալումն խոստովանելէն զկնի՝ կը խոստովանինք նաեւ, որ մենք ո՛չ բանագողութեան զիջանելու չափ ցածութիւն ունինք և ոչ Գեր. Խորէն Եպիսկոպոսի երկոց վերայ յափշտակուած սիրահարներէն եմք։ Եթէ բանագողութեան ցած խղճն ունենայինք, ոչ թէ Գեր. Խորէն եպիսկոպոսի, այլ ուրիշ առաւել ընտիր, ինքնաբուղխ և արտաքին ու ներքին յատկութեամբ կատարեալ քերթողածներէն կ'առնէինք և մեր անուամբ կը հրատարակէինք, որով գոնէ մեր ճաշակին ցոյց տուած կ'ըլլայինք, թէ կարող ենք ընտրել գեղեցիկն յոռիէն և բնականն՝ անբնականէն։ Մենք նոյն երգն, ինչպէս ըսինք, իբրեւ աշակերտութեան ժամանակի երախայրիք հրատարակութեան տուած եմք և ոչ իբրեւ նշանաւոր քերթուած, և այս հրատարակութիւնն պարզ սխալմունքէ յառաջ եկած է, որոյ մասին յառակայէս ներողութիւն կը խնդրեմք Մասիսի մէջ զմեզ թշնամանող յօդուածագիրներէն եւ կը խնդրեմք պատուարժան խմբագրութենէդ որ սոյն երկտողս բարեհաճիք հրատարակել Սիօնի միջոցաւ (1)։

Մնամ . . . .

Մ. Վ. Կէօմիւրճեան.

---

(1) Այս նամակն հրատարակելով այլ եւս հարկ չը մնար Մասիսի Մ. Ն. Ն. Մեծարգոյ յօդուածագրի այն խօսքերուն պատասխանել, որով. (չը

digitised by A.R.A.R.@

## ՊԱՏԱՍԽԱՆ

Առ Գ. Ա. Ա. — Կը գրէք թէ՝ Սիոն ինչո՞ւ լռութիւն կը պահէ Ազգային խնդրոց նկատմամբ, ինչո՞ւ չը խօսիր Ափօ և Թատրոն լրագրոց խափանման մասին, ինչո՞ւ ուշադրութեան չառնուր՝ Ամեն. Ներսէս Ս. Պատրիարքի վերջին օրերս հրատարակած երկու նշանաւոր նամակները . . . :

Իրաւունք ունիք Սիոնի կարծիքն պահանջելու սոյն կարևոր խնդրութեանց նկատմամբ. բայց կան այնպիսի պարագաներ, որ Սիոն ստիպուած է լռել: Այս վերջին գանի մի տարուան մէջ Ազգային խնդիրներն այնպիսի դարձուածներ կ՚առնուն, այնպիսի տխուր տեսարաններ կը ներկայացնեն, որ ամեն զգայուն սրտեր թախծութեան և վհատութեան մէջ կ՚ընկղմեն: Այնպիսի վայրկեաններ կան Ազգերու կենաց մէջ, որ շատ անգամ ջերմ հայրենասէրներն անգամ առժամանակ մի խոյս կուտան և երեսները կը ծածկեն, որ չը տեսնեն այն աղէտալի երևոյթներն, որոնք խաւարամած տեսիլներով կ՚երևին ազգային կենաց հորիզոնին վրայ: Կզգան աղէտները, կը տեսնեն արհաւիրքը, կը տեսնեն ազգամատնութեան գժոխային ոգին, սրտերը կը թնդան, աչքերը կ՚արտասուեն, մազերը կը յուզին. բայց, ինչպէս ասացինք, խոյս կուտան առ վայր մի, տեսնելու համար թէ ո՞ւր պիտի եզերի չարութեան կատաղութիւնն: Այսպիսի պարագայից մէջ թոյլ տալու է մինչև որ յուզուելով և մաշուելով ըսպառի նենգութեան, ստութեան և խարդաւանաց չար ոգին. մինչև որ պարագաները նպաստեն և յանկընկալս ամօթահար լինին ազգի բարութեան և խաղաղութեան յանդուգըն ոսոխներն: Ահա այս նկատմամբ մխիթարական երևոյթ մի կը համարինք Ամեն. Ներսէս Պատրիարքի հրատարակած նամակներն, որով կը յուսանք թէ կը բարձրանայ կողմն ճշմարտութեան եւ այս քան յուզմունքներէ զկնի, թէև կարի անագան, Ազգը կը ճանաչէ իւր վնասները և կը սկսի գէթ այսուհետև իւր բուն շահը մտածել և ըստ այնմ գործել:

գիտենք թէ ուստի՞ և ինչ շարժառիթէ դրդեալ) Թշնամանել գիտած է Սիոնի Խմբագրութիւնն, որ բանադրութեան սպառնի հետ կ՚առնէ նաև վերացական գովեստներն, և կը փափագի որ բանաւորական քննութեանց մէջ բանասիրաց թափանցիկ առնութիւնն ու անաչառ ոգին երևայ քան թէ չըլուածն ու յափշտակութիւնն. Սիոն իւր այնքան կեղծ փափագն ընդարձակօրէն յայտնած է իւր — Տօքթէրական Բանաստեղծական և Տաղաչափական — յօդուածով. (Սիոն 1869. Թիւ 9) և այժմ հարկ չը համարիր երկարօրէն խօսիլ այս մասին.

Ծ. Խ.

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ռուսաստանի և Տաճկաստանի պարբերական թերթերն երկու ամենատըխուր լուրեր կը հրատարակեն, այն է Սուրբ Էջմիածնի ճեմարանին և Տըփխիսի Թամամշեան Քարվանսարայի այրուիլն: Ինչպէս Էջմիածնի ճեմարանն ազգային հոյակապ հաստատութիւն մ՚է, նոյնպէս և Քարվանսարան ոչ միայն Հայոց սեպհականութիւն է, այլ և վարձաւոր վաճառականներն գրեթէ բոլորն Հայ են, որոց վնասն ազգայնութեան վնաս կը համարուի և անպատճառ տխուր արձագանք պիտի

digitised by A.R.A.R.@

տոյ բոլոր Ազգայնոց սրտին մէջ։ Էջմիածնի Ճեմարանն Դաստիարակութեան ապաստանարան մ՚էր և ներկայ Վեհափառ Գէորգ Կաթողիկոսի նշանաւոր գործերէն մին, որուն վրայ իւրաքանչիւր Հայ խանդաղատանօք կը նայէր և կը յուսար որ այդ նիւթական շէնքը եկեղեցական յառաջադիմութե և բարոյական շինութեան հիմն պիտի լինէր․ իսկ Տփխիսի Քարվանսարան Հայոց վաճառականական դասուն պարծանքն էր, և դժբաղդաբար երկոքեան եւս գրեթէ մոխիր դարձան ՚ի ցաւարտի բոլոր ազգայնոց․ Ո՞րչափ դրամ և ժամանակ պէտք են այն հոյակապ շէնքերն վերստին իրենց առաջին դրից վերածելու համար։

— Ս․ Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովն ներկայ ամսոյս մէջ հանդիսիւ բացուեցաւ Սրբազան Նախագահի գրաւոր Առենախօսութեամբ, որով Վանուցս միամեայ (1873_74) բարոյական և նիւթական վիճակն կը նկարագրէր, օտար ազգաց յարուցած վնասաբեր խնդիրներն կը յիշէր եւ Ազգ․ Կեդրոնական Վարչութեան ու Էջմիածնի Մայր Աթոռոյ հետ ունեցած յարաբերութեանց վիճակը կը պատկերացնէր։

Ժողովը բացուեցաւ Տն․ Ժողովոյ միամեայ գործողութեանց Տեղեկագրի և Վանուցս Ելից և Մտից Հաշուեկշռոյ քննութեան առթիւ․ Տեղեկագիրն և Հաշուէցոյցն քանի մը նիստերու մէջ կարդացուեցան, և յատուկ մասնաժողովոյ յանձնուեցան քննութեան և վերստին Ընդհանուր Ժողովոյ ներկայանալու պայմանաւ։

— Քաղաքիս Վսեմափայլ Բդեշխն՝ Քեամիլ Փաշայ փոխուած լինելով կը պատրաստուի ուղեւորութեան, որուն պէտք է յաջորդէ Վսեմ․ Ալի Պէյ, որ ծանօթ է արդէն Պաղեստինի ժողովրդեան, եւ կը յուսացուի թէ շուտով իւր պաշտօնատեղին կը ժամանէ։ Շատ խնդիրներ ունէր Սուրբ Աթոռս, որք նախորդ Բդեշխի օրով սկսուած էին, ինչպէս են գլխաւորապէս Բեթղեհէմի սիւնազարդ գաւթի, Սուրբ Փրկչի շինութեան և գերեզմանատան խնդիրներն, որոնք այժմ անկատար վիճակի մէջ կը մնան․ եթէ յաջորդ Բդեշխի օրով այն խնդիրներն իրենց օրինաւոր եւ արդար լուծումն ստանան, մեծ տագնապ մի և տառապանք պիտի պակսին Սուրբ Աթոռոյս Վարչութեան վրայէն, որ քանի մի տարիէն ՚ի վեր բարոյապէս և նիւթապէս կը հեծէ այն ծանրութեան տակ։

— Ս․ Աթոռոյս Ուխտաւորներն տակաւին սակաւաթիւ են․ թերեւս այսուհետեւ պիտի յաճախեն․ բայց կը ցաւինք որ Հայաստանի քանի մի գաւառաց ընտիր ժողովուրդներն տեղական սովուն արհաւրանաց ենթարկուած լինելով պիտի չը կարենան գալ, վասն զի ինքեանք իսկ կարօտ են օգնութեան։

— Տեղւոյս անձրեւներն արդէն ըսկսած են եւ տեղական ժողովուրդք շատ ուրախ են այս մասին, մանաւանդ շինականք և երկրագործք․ Անցեալ տարւոյ ցրտութեան հակառակ այս տարի եղանակն խիստ մեղմ է և դաշտորայք արդէն սկսած են կանաչիլ և գարնան զգեստ զգենուլ։

— Յունաց միաբանութեան և տեղական յունադաւան ժողովրդոց մէջ տակաւին անհամաձայնութիւնն կը տիրէ․ ինչպէս կ՚երեւի երկու կողմերն եւս զիջանելու միտում չ՚ունին առ այժմ։ Պուլկարաց ուխտաւորութիւնը գրեթէ բոլորովին դադրած է, և ուխտաւորաց մէջ ամենէն մեծ տեղն կը գրաւեն Ռուսներն, որք այժմ

digitised by A.R.A.R.@

խաղաղ վիճակի մէջ կը գտնուին Յունաց հետ ։

---

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

---

### ՀԱՄԱՌՕՏ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԲՆԱԿԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ի

Գ. Ս. ԽԱՊԱՅԵԱՆԷ

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԻ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Կը վաճառուի յԵրուսաղէմ՝ և ՚ի Պօլիս ՚ի Փոխանորդարան.

Գին 7 դահեկան.

Այն հրատարակութեան վերայ փոքրիկ ծանօթութիւն մի տալու համար արժան կը համարիմք Դասագրքին հետեւեալ ԱԶԴԸ հրատարակել ։

« Ներկայ Համառօտ Աշխարհագրութիւնը պատրաստեցինք նորավարժից համար ուղեցոյց ունենալով մեզ լաւ քաղաքական նոր փոփոխմանց և աշխարհագրական նորագոյն գիտելեաց ՚ի վերջին ժամանակս հրատարակուած Գաղղիարէն ընտիր Դասագրքերն ։

Դասաւորութեան մասին պատշաճ գտեցինք ընդհանրապէս նոր ընդունուած եղանակին հետեւիլ, նախ Բնական մասն դնելով, ապա Քաղաքականն և ՚ի վերջոյ Ուսումնականն ։

Այն դասաւորութեան գլխաւոր օգուտն այն է, որ երկրագնտին բնական նկարագիրը աշխարհագրական ուսման սէր և հետաքրքրութիւն կը զարթուցանէ նորավարժից մէջ. գլխաւոր լերանց շղթայից ուղղութիւնը աւելի զուարճութիւն կը տայ, քան Քաղաքական մասի տէրութեանց և քաղաքաց ցանկը անուններն. մարդկային ցեղի այլ և այլ բաժանմանց, նոյն քաղաքակրթութեան աստիճանին և աշխատութեանց ուսումն աւելի զուարճելի է. վերջապէս երկրագնտին այլ և այլ մասանց պտղաբերութեան և զանազան կենդանեաց համառօտ նկարագիրն աւելի մանկական հասկին յարմար է ։ Բաց յաստի, նկատելով՝ որ շատ անգամ ցանկը անուանացուցութիւնը տաղտկութիւն կը պատճառէ ուսանողներուն և եռանդը կը մարէ, շատ համառօտ անցանք Քաղաքական մասն միայն գլխաւոր քաղաքներն դնելով. աշխարհներն կամ տէրութիւններն ևս Բնական բաժանմանց, կամ ազգանց համեմատ դասաւորեցինք դիւրըմբռնելի առնելու համար ։ Ուսումնական մասին մէջ ևս նախընթաց երկու մասանց համառօտութիւնը պահպանեցինք ։ Իսկ ամենէն վերջը աւելցուցինք Հայաստանի աշխարհագրութիւնը, զոր մեր մանուկներն աւելի ընդարձակօրէն ուսանիլ պարտաւոր են ՚ի կանուխ ժամանակաց և կատարելապէս տեղեկանալ իրենց հայրենեաց ։

Բաւ համարելով այն փոքրիկ ծանօթութիւնը դասագրքին վերայ, կը յաւելումք, որ Ս. Աթոռոյս Տն. ժողովոյ կողմէն Ուսումնական Խորհրդոյ քննութեան յանձնուելով՝ հաւանութիւն գտած է տպագրութեան, որով կը յուսամք թէ՝ նոյն հաւանութիւնն պիտի գտնէ Ազգային վարժարանաց մէջ իւր կիրառութեամբն, որ մեր աշխատանաց միակ և ամենէն մեծ վարձն կը համարիմք »։

digitised by A.R.A.R.@